ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՔՈԼԵՋԻ) ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը (ՀՊՏՀ) հայտարարում է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (քոլեջի) բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների 2021/2022 ուսումնական տարվա ընդունելություն (հեռակա ուսուցմամբ)՝ ուսումը ՀՊՏՀ հետևյալ կրթական ծրագրերով շարունակելու համար.

N	Կրթական ծրագրի ծածկագիրը	Կրթական ծրագիր	Տեղերի քանակը (հեռակա)
1.	041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	25
2.	041201.01.6	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	38
3.	041301.01.6	Կառավարում (ըստ ոլորտի)	22
4.	041401.01.6	Շուկայագիտություն (Մարքեթինգ) (ըստ ոլորտի)	8

ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ

N	Կրթական ծրագրի ծածկագիրը	Կրթական ծրագիր	Տեղերի քանակը (հեռակա)
1.	041301.01.6	Կառավարում (ըստ ոլորտի)	4

ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ

N	Կրթական ծրագրի ծածկագիրը	Կրթական ծրագիր	Տեղերի քանակը (հեռակա)
1.	041301.01.6	Կառավարում (ըստ ոլորտի)	4

Դիմորդների դիմում-հայտերն ընդունվելու են ս.թ. հուլիսի 1-ից հուլիսի 31-ը ներառյալ և օգոստոսի 15-ից օգոստոսի 30-ը ներառյալ ՀՊՏՀ ընդունող հանձնաժողովում:

Դիմում-հայտին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1. Ռեկտորին հասցեագրված դիմում,
2. ավարտական փաստաթղթի բնօրինակ՝ դիպլոմ և դրա ներդիր,
3. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի արձանագրության պատճենը կամ երաշխավորագիր,
4. չորս լուսանկար (3x4 չափսի),
5. անձնագիր կամ նույնականացման քարտ և դրա պատճենը
6. զինվորական գրքույկ կամ կցագրման վկայական և դրա պատճենը,
7. ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնությունից օգտվելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր (առկայության դեպքում):

Ընդունելությունն իրականացվում է ՀՀ Կառավարության 2015թ. հուլիսի 8-ի «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի N 589 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 752-Ն որոշման համաձայն՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=99035:

Կից ներկայացված են միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ***պետական ուսումնական հաստատությունների ցանկը***, որոնց բարձր առաջադիմությամբ շրջանավարտներին թույլատրվում է կրթությունը շարունակել ՀՊՏՀ-ում:

Կից ներկայացված են նաև ՀՊՏՀ 2021-2022 ուստարվա ուսման վարձավճարներն ըստ մասնագիտությունների՝

https://asue.am/upload/files/dimord-2021-2022/Departments_Fees_Exams.pdf

Դիմորդների ընդունելությունը կատարվում է ՀՊՏՀ համապատասխան ընդունող հանձնաժողովներում՝ ժամը 9^{30} – 17^{30} -ը:

Հասցեներ՝ ՀՊՏՀ Երևան, Նալբանդյան 128, հեռ՝ 010 593 473 կամ 010 589443

Ք. Գյումրի, Վ. Սարգսյան 32, հեռ՝ +374939358446 կամ 0312-3-58-44

Ք. Եղեգնաձոր, Վայքի փողոց 4, հեռ 00374 281 25410:

Հաջողություն ենք մաղթում դիմորդներին: